Հավելված N 2
ՀՀ կառավարության 2011 թ.
նոյեմբերի 3-ի նիստի N 43
արձանագրային որոշման

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Յ Ց

ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԲԽՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

N/N	Միջոցառման անվանումը	Իրականացման ժամկետը	Կատարողը (կամ պատասխանատու մարմինը)	Ֆինանսավորման աղբյուրը	Ակնկալվող արդյունքը
1.	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի ապրիլի 15-ի N440-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնելը	2011թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	ՀՀ քաղաքաշինության նախարարություն	չի պահանջվում	ՀՀ կառավարության 15.04.2010թ. «Հայաստանի Հանրապետության համայնքներում (բնակավայրերում) անհատական բնակելի տների բազմակի օգտագործման օրինակելի նախագծերի և դրանց կատալոգի ներդրման ու կիրառման կարգը հաստատելու մասին» N440-Ն որոշմամբ սահմանված դրույթների համապատասխանեցումը Հայեցակարգով նախատեսված քաղաքաշինական էլեկտրոնային թույլտվությունների գործընթացների պարզեցմանն ուղղված սկզբունքներին
2.	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 29-ի N1473-Ն	2012թ. մարտի 2-րդ տասնօրյակ	ՀՀ քաղաքաշինության նախարարություն	չի պահանջվում	ՀՀ կառավարության 29.08.2001թ. «Ճարտարապետահատակագծային առաջադրանք տալու կարգը հաստատելու մասին» N1473-Ն

	որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնելը				որոշմամբ սահմանված դրույթների համապատասխանեցումը Հայեցակարգով նախատեսված համակարգի ներդրման սկզբունքներին, ուղղված՝ քաղաքաշինական գործընթացների պարզեցմանն ու օպտիմալացմանը
3.	«Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 21-ի N812 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնելը	2012թ. ապրիլի 2-րդ տասնօրյակ	ՀՀ քաղաքաշինության նախարարություն	չի պահանջվում	ՀՀ կառավարության 21.12.1998թ. «Բնակելի, հասարակակն, արտադրական շենքերի ու շինությունների նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը սահմանելու մասին» N812 որոշմամբ սահմանված դրույթների համապատասխանեցու մը հայեցակարգով նախատեսված համակարգի ներդրման սկզբունքներին, ուղղված՝ էլեկտրոնային թույլտվությունների տրամադրման մեխանիզմների միջոցով քաղաքաշինական գործընթացների կանոնակարգմանն ու պարզեցմանը
4.	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի փետրվարի 2-ի N91 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության	2012թ. մայիսի 2-րդ տասնօրյակ	ՀՀ քաղաքաշինության նախարարություն	չի պահանջվում	«Հայաստանի Հանրապետությունում շինարարության թույլտվության և քանդման թույլտվության կարգը հաստատելու մասին» N91 որոշմամբ սահմանված դրույթների համապատասխանեցումը

	որոշման նախագիծը ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնելը				հայեցակարգով նախատեսված քաղաքաշինական էլեկտրոնային թույլտվությունների համակարգի ներդրման սկզբունքներին, ուղղված՝ թույլատվական ընթացակարգերի տրամադրման մեխանիզմների կանոնակարգմանն ու պարզեցմանը
5.	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N626 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնելը	2012թ. հունիսի 2-րդ տասնօրյակ	ՀՀ քաղաքաշինության նախարարություն	չի պահանջվում	ՀՀ կառավարության 08.05.2003թ. «Ավարտված շինարարության շահագործման փաստագրման կարգը հաստատելու մասին» N626 N91 որոշմամբ սահմանված դրույթների համապատասխանեցումը հայեցակարգով նախատեսված քաղաքաշինական էլեկտրոնային թույլտվությունների համակարգի ներդրման սկզբունքներին